

որևէ կայուածատէր և կամ հողատէր ձեռնառն գնով փորձով և տալիս իւր հողը, այն պայմանով որ փողը վճարեն կանխիկ գարնան սկզբին: Արտեղից կարող է զիւղացին մի այդպիսի ժամանակ մի կամ մի քանի հարիւր բութ, ձեռք բերել: Մեծ է օգուտը, բայց ինչ կարող է անել: ստիպուած կամ պէտք է ձեռքերը ձալած յետ քաշուի և կամ վեր առնի աւելի թանկ գնով: որպէս զի հողատէրը համաձայնի հողագինը ստանալ աշնանը: Այսպիսի հանգամանքներում բանկը դարձեալ կարող է օգնութեան հասնել: Էէնց գարնան սկզբներին զիւղացիք կարող են ստանալ անհրաժեշտ գումարը շատ շնչին տոկոսներով: կէս տարուայ համար ամենաշատը մանէթին չորս կոպ: որը իբրև խնայողութիւն կաւելանայ բանկի հիմնական գրամագլխի վերայ: Այսպիսով կօզուեն թէ իրանք զիւղացիք, թէ հողատէրը և թէ բանկը:

Չպէտք է ասել, որ հազար բութին մի շնչին գումար է, ուրիժն և չի կարող բանկի համար ծառայել իբրև մի հիմնական գրամագլուխ և կամ ասել թէ այդ շնչին գումարը կարող է միայն փոքրիկ գործերի համար պէտք գալ: Անգամների երաշխաւորութիւնը, որ համաձայնուել են բաց անել մի այդպիսի շահաւէտ հաստատութիւն, բաւական է նորա կարևոր գէպքերում օգնութեան կղիմեն մեծ քաղաքների բանկերին: որոնք առանց մերժելու բաւականութիւն կ'ունայդպիսի հաստատութեան պահանջներին: Բանկի միւս օգուտն էլ այն է, որ զիւղացու համար աւելի ձեռնառն է աւելորդ փողերը զիւղական բանկին յանձնելը: քան խնայողական գանձարանը: որովհետև այնտեղից աւելի մեծ տոկոս կարելի է ստանալ: բացի դրանից մատչելի է զիւղացուն և շահաւէտ իւրեանց բանկի համար:

Բանկի գոյութիւնը զիւղում ոչ միայն օգտակար, այլ նաև ամենաձեռնառն հաստատութիւնն է պահեստի գրամագլխի գործածութեան համար: Խնայողական գանձարանը հազար բութը համար տարեկան իբրև տոկոսկարող է տալ ընկերութեանը ընդամենը 35 բութ: Բայց եթէ այդ նոյն գումարը գործադրենք զիւղական բանկում: իւրաքանչիւր բութը 15—20 կոպ, օգուտ հաշուելով: շահուել կարելի է 150—200 բութ: Ահա այսպիսի եկամուտ ունին նորգեղայի բոլոր զիւղական բանկերը: Մնում է միայն, որ բանկի կառավարիչը լինի փորձուած, հմուտ և հաւատարիմ: անձն: նորա ընտրութեանը մասնակցում է նաև կառավարութիւնը: որը արթուն աչքով միշտ հսկում է բանկի գործերի վերայ և նպաստում նորա այս կամ այն գործունէութեան յառաջադիմութեանը:

Սղոնանման ընկերութիւններ և բանկեր կարելի է հիմնել և մեղանում: մնում է, որ զիւղացիք իրանք հասկանան նոցա տուած օգուտները

և չընդդիմանան ինչպէս սովորաբար նկատուում է ամէն մի նորութիւն ներմուծուելիս և առանց խնայելու իւրեանց մի քանի կոպէկները ձեռնառնելու լինեն այդպիսի շահաւէտ գործի:

Աերջացնելով մեր խօսքերը փոխադարձ օգնող ընկերութեան մասին կրկնում ենք, որ մեծ է նորա հասցրած օգուտները զիւղական հասարակութեան համար և չպէտք է խնայել ամսական մի քանի կոպէկ զո՛հելու մի այդպիսի վե՛հ գործի: Այո՛, պատահում են և այնպիսի անհետաճեալ նոյն իսկ, ներուի մեզ ասել, անմիտ մարդիկ, որոնք կարծում են, թէ այլոց թշուառութիւնները չեն կարող իրենց բարեկեցութիւնը և երջանկութիւնը խանգարել: Աղորմելիները այսչափը գոնէ չեն ըմբռնել, որ ընդհանուրի բարօրութեան երաշխաւորութիւնը փոխադարձ օգնութեան մէջն է կայանում:

Գ. Դ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ-Բ

Աշխարհիս ամենափոքր տեղութիւնները. — „Rundschau für Geographie und Statistik“ թերթի մէջ ուշադրութեան արժանի տեղեկութիւններ ենք գրանում հետեւեալ երկու ամենափոքր տեղութիւններն այն է St. Kilde-ի և Houst-ի մասին: որոնց գոյութիւնը, շատ հաւանական է, թէ քչերին յայտնի կլինի, թէև նրանցից մէկը, St. Kilde-ն (Աւստրալիան ովկիանոսում, Լերրիտեան կղզիներից դէպի արևմուտք) մինչև անգամ իբրև իսկական թագաւորութիւն է ներկայանում: նրա բռնած տարածութիւնը իսկութեամբ յայտնի չէ, սակայն հաւանական են համարում, որ երկու քա. հազարամետրից աւելի չի լինի: (մօտ 2 քա. վերստ), Այս փոքրիկ տեղութիւնն իր բազմամարդութեամբն էլ աչքի չի ընկնում և ոչ իսկ մի յայտնի քաղաք ունի: Սրա բնակիչները մի քանի հարիւր ձկնորսներ են, որոնք կղզու այս ու այն կողմն են ցրուած: իսկ նրանց թաղուհին բնակուում է մի այնպիսի շինութեան մէջ, որն ոչնչով չի զանազանուում կղզու միւս հասարակ շէնքերից: Թագուհին որոշ արքայական սո՛հմի չի պատկանում: այլ ընտրուում է տեղացի ազնիւներից և կառավարում է երկիրը մինչև իր ամուսնանալը: Գրանից յետոյ նա ընդ միշտ կորցնում է իր իշխանութիւնը և նոր ընտրութիւն է նշանակուում: Տղամարդիկ գահ բարձրանալու իրաւունք չունին: այդպէս է պահանջում St. Kilde-ի օրէնքը, որն իր ոյժն չի կորցրել անյիշատակ ժամանակներից մինչև օրս: որովհետև St. Kilde միշտ էլ անկախ ու ազատ տեղութիւն է կելլ:

Երկրորդ տէրութիւնը, Houst-ը Քրանսիայումն է գտնուում Ստորին Պիրենեան նահանգի լեռների մէջ, Այս հասարակացեալութիւնը Սան—Մարինօ է կոչուում որովհետեւ սրա գիրքն էլ ծովի մակերևոյթից մի քանի հազար ոտ բարձր է և բուն Ս. Մարինօ-ի նման հազարամեայ հասարակացեալութիւն է ծանաչուած, Միայն Houst-ը շատ աւելի փոքր է. 1 քա. հազարամեար տեղ հազիւ է բրուել (մօտ 1 քա. վերստ) և 120 մարդուց աւելի բնակիչ չունի, որոնք անշուք խրճիթներով մէջ են ապրում և պարապում են բրդէ և մետաքսէ գործածքներ պատրաստելով, նրանք մինչև անգամ նախագահ էլ չունին, այլ կառավարուում են ծերերի խորհրդով, որն իր բարեհայեցողութեամբ քննում ու վճռում է եղած տարաձայնութիւնները, առանց որևէ վարձատրութիւն ստանալու, որովհետև Houst-ում ոչ գրեալհարկ կայ և ոչ հողի կամ ստացածքի տուրք: Նրանք նոյն իսկ սեպհական գերեզմանատուն էլ չունին, ուստի և ստիպուած են իրենց մեռած քաղաքացիներին Քրանսիական հողում թաղելու: Բայց որովհետև այն ծանապարհը, որը դէպի մերձակայ Քրանսիական գիւղն է տանում, այնքան գառնվայր է, որ յուշարեւորութեան հանդիսին մասնակցողները չեն կարող ննջեցնելու մարմինն անփորձ ներքև իջեցնել, դրա համար ժայռի մէջ մի յարմար անցք են փորել և նորանով գաղաղը ներքևի հոյժան են իջեցնում:

* *

Արամանդի հոյժար.— 2ինաստանից նոր է վերագործել գերմանացի երկրաբան Բիխթիւկերը, նա այնտեղ գտել է քարածուխի շատ հարուստ շերտեր, դեռ է նաև ազամանդի մի այնպիսի անսովոր հանքատեղի, որ կարելի է ազամանդի հոյժա առնանել, Այս անդին վայրը մի քանի հեկտար (մի հեկտարը—երկու օրավար) տարածութիւն է բռնում և գտնուում է Շայիդ-Փանգ նահանգում, Տոնկինի հիւսիս արևմտեան սահմանի վրայ և Ի—խօ գետի աջ ափով ձգուելով հասնում է մինչև Ի—խօ—Խու գաւառի միջին մասը: Սակայն անհաստալին այս է, որ այդտեղի շինացիները, թէև ապակի կարելու համար գործ են դնում այդ անդին քարերը, բայց զաղափար անգամ չունին, թէ ինչ ահագին գանձի տէր են: Բիխթիւկերը շատ շնչին զնով կարողացել է 25 հատ բնտիր ակ ձեռք բերել, որոնք ի միասին 90 կարատ են կշռում: Գերմանացի երկրաբանը մանրամասնօրէն դիտել է այդտեղի գրութիւնը, ուսումնասիրել է և երկրաբանական տեսակետից և մեծ նմանութիւն գտել այս ու հարաւային Ափրիկայի (Պիմբրլէյթ) ազամանդի հանքատեղերի մէջ:

* *

Աշխարհիս հարստութիւնը.— Մինչև այժմ հաւաքուած տեղեկութիւններից երևում է, որ 1600 թուականին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում 3275 միլիոն ֆրանկի ոսկի արծաթ և պղինձ փող կար: Երկու հարիւր տարուց յետոյ այդ գումարը տան և չորս միլիարդ երկու հարիւր միլիոնի հասաւ: Իսկ մեր դարի սկզբից այս նկատմամբ յառաջդիմական մեծ քայլեր են կատարուած, Այժմ շրջանառութեան մէջ գտնուած ոսկի արծաթ և պղինձ փողը փաթառն և երկու միլիարդ ֆրանկից անց է:

Վարկի թղթերը թէև նոր գիււա են, սակայն մեծ ծառայութիւն են մատուցել գրամական շատ կրճատ հարցեր վճարելու: Տասնեւեօթերորդ դարի սկզբներում դեռ համարեա թէ անորոշադրելի այդ թղթապրամները շուտայոյժ գործածութեան մէջ մտան հետեւեայ գարում: 1800 թուականին նրանց գումարը մօտաւորապէս երկու միլիարդի էր հասնում: Այժմ գործածական վարկի թղթերը քսան միլիարդ ֆրանկ արժեն, Արեւմն այդ թղթերն անհամեմատ աւելի արագ գործածութիւն են գտել քան միւս գրամները: Երկրորդ տեղը ոսկի փողն է բռնում, 1600 թուականին 725 միլիոն ֆրանկի ոսկի կար շրջանառութեան մէջ, երկու դարից յետոյ 3150 միլիոն, իսկ այժմ քսան և հինգ միլիարդի ոսկի փող է ձեռքէ ձեռք անցնում:

Եթէ ուշադրութիւն դարձնելու լինինք փողի շրջանառութեան այդ բարդ գործողութեան վրայ, կտեսնենք, որ ամենից հարուստ երկիրը Քրանսիան է: Իւրաքանչիւր ֆրանսիացու միջին թուով 300 ֆրանկ փող է բնկնում: Հոլանդացու՝ 195 ֆր., գերմանացու՝ 125 ֆր., անգղիացու՝ 110 ֆր. և վերջապէս իւրաքանչիւր ռուսի 50 ֆր.: Ամենից աղքատ շինացիներն են դուրս գալիս, որովհետև Երկրային կայսրութեան իւրաքանչիւր զաւակին միմիայն 12½ ֆրանկ է բնկնում: Ամենից թանգնոց ոսկի փողը Բուլղարիայի ոսկին է, որը 81 ֆր. և 25 սանտիմ արժէ, իսկ ամենից արժանը պարսկական թուամսը, որը 6 ֆր. և 55 սանտիմ է գնահատուում:

* *

Վայրի կենդանութեան կենդանիների մագերի վրայ ունեցած ազդեցութիւնը.— Արեւմտեան Հնդկաստանի (Մեծ և Փոքր Աւստրալեան կղզիների) ամմշակ տեղերում ինչպէս և ծանապարհների ամբերին առատօրէն աճում է այս զարմանալի բոյսը, Բնիկները իրենց բարբառով Խմբայ են ասում սրան, իսկ ռուսարմութեան մէջ յայտնի է Lencœna glauca անունով: Ըստ է պատահում Ծամայկայում, բայց անուշով: Ըստ է պատահում կղզիներում, որտեղ ձիաների և թէ եղջերաւոր կենդանիների համար ընտիր ճարակ

է համարում: Սակայն հնդկարմախն խիստ օտարոտի ազդեցութիւն է թողնում այն կենդանիների վրայ, որոնք այդ բոյսով են կերակրուում: Այդ անասունների մարմնու զանազան մասերի մազերը թափուում են: կենդանին ճաղատանում է: Օրինակ, առաջ ձիանների բաշն է թափուում իսկ յետոյ պաշի մազերը: Ինչն ազդեցութիւնն է նկատուում և ջորիների ու էշերի վրայ: Իսկ առանց այդ էլ անձուռնի խողը խիստ զգուշի է դառնում: Երբ վերջին մազից անգամ զրկուում է: Այս է միայն հնդկարմախնու վատ ազդեցութիւնը: կենդանիներն ըստ ամենայնի առողջ են մնում և ճարակն էլ նպաստում է նրանց պարարտանայուն: Սակայն ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ կենդանիների մազերն սխոււում են շուտով բուսնել: Հենց որ դադարում են նրանց նոյն բոյսով կերակրել: միայն այն տարբերութեամբ, որ նոր բուսած մազերն իրենց տեսքով և գոյնով ամենեին նման չեն լինում նախկիններին: Իսկ աւելի զարմանալին այն է, որ եղջերաւոր կենդանիների, այծի, ոչխարի մազերի վրայ ոչ մի վնասակար ազդեցութիւն չի անում այդ բոյսը, որն մեծ ախորժակով ուտում են այդ կենդանիները:

Առաքելական աթոռ Կաթնուղիկուութեան ամենայն Հայոց 493.

Աստուածային հոգւոյ գործունէութեան նշանները 421.

Աստուածաշունչ Ս. Գիրքը 55.

Քաջատրութեան կարօտ կէտեր Ս. Գրքի մէջ. 269. 327. 373. 424.

Գեաները 221.

Կրկնուած մեղքը 324.

Կրօնշատի աւագ քահանայ Խոնանն Սերգէեի 70-ամեայ յոբելանը 491.

Հարանց ժայներ 60.

Հաւատոյ մարտը 53.

Մարդկութեան եւ ազատութեան աստօքիւ թէոդորոս Պարկեր 228. 271. 329.

Մեր սուրբ հարց դաւանութիւնը 102.

Մի նշանաւոր աստուածաբանի ուսուցչական գործունէութեան 25-ամեակը 426.

Մոնտիոնի առաքինութեան մրցանակը 7.

Մշակների պէտքը հոգւոր ասպարիզում 485.

Յունական վանականութիւնը 106. 175.

Ծնորմաւոր նոր տարի 5.

Սրբութեան պահանջը 99.

Վաստակելու շնորհը 372.

Տէր իմ եւ Աստուած իմ 173.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ 4.

Քրիստոսի ծնունդը 488.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Ընդհանուր տեսութիւն 496.

ՕՐԹՈԴՈՒԲՍ ԵԿԵՂԵՑԻ.

Սրբ. Պալլագիյի մահը. 10. Մետրապոլիտ Գրիգորիյի մահը. Սրբ. Անտոնիյի ընտրութիւնը. 11. Սինագոգիյի աւագ քահանայի մահը. Թոմասեան քրիստոնեաներ. Սան—Ստեֆանոյի նորաշէն եկեղեցու օրհնութիւնը. Մայրաքաղաքի և շրջակայքի հոգւորականութեան հովուական ժողովի նիստերը. Ծննդեան տօնի աթիւ ողորմութիւն բաշխելու եղանակներ 12. Օրթոդոքս Տիեզերական ժողով. 61. Օրթոդոքս արևելքն 1898 թ.ին. 181—184. Ռուսական եկեղեցի Բուէնոս-Այրէսում և Վեննայում. Ամենաողորմած կայսեր մի միլիոն բուրջու շնորհը սովատանջ ժողովրդեան 184. Բոսնիայի և Հերցեգովինայի մետրապոլիտների դէմ բողոք. 225. Կիւրդի և Մեթոգիոսի տօնը. Պուշկինի ծննդեան հարիւրամեակը. Սիրիւր պարտիւլու սովորութեան վերանայը. 275. Սով Ռուսաստանում. Կրօնի դասատուների և եղբայրութիւնները.

**ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ
Ա Ր Ա Ր Ա Տ Ի**

1899

ԹՈՒԱԿԱՆԻ

ՊԼԵՏՈՆԱԿԱՆ ԲԸԺԻՆ.

Ըաղուածք ի կոնդակաց Վեհափառ Հայրապետի. 3. 51. 171. 219. 267. 323. 371. 419. 483:

Ըաղուածք Սինոդի օրագրութիւններից. 4. 99. 268. 371. 420.

Պաշտօնական յայտարարութիւն ազգ. պատրիարքարանի 4.

Պարսից Արեգակնաւիայլ Եանի գրութիւնն ի պատասխանի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի երկու նամակների 52.

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԸԺԻՆ.

Անգղիոյ զանազան եկեղեցիները. 376.